



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. հունիսին /վերլուծություն/

2005թ. հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 10030 գործարքներ, որոնց քանակը 2004թ. հունիսի համեմատ աճել է 21.0%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ 5.7%-ով:

2005թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3557 օտարման գործարքների 87.6%-ը կազմել են առուվաճառքները, 11.5%-ը՝ նվիրատվությունները և 0.9%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 38.7%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. հունիսին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2004թ. հունիսի համեմատ, աճել է 5.7%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ 1.0%-ով: 2005թ. հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.9%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ հունիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 6.7%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ նվազել՝ 17.2%-ով:

2005թ. հունիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

/1ԱՄՆ դոլարը 2005թ. հունիսին համարժեք է 449.0դրամին/

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունիսին /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/	Միջին գները		
		/ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/		
		հունիս 2004թ.	հունիս 2005թ.	մայիս 2005թ.
Կենտրոն	350.0-970.0	456.8	622.0	605.1
Արաբկիր	250.0-650.0	359.1	520.0	515.0
Քանաքեռ-Զեյթուն	200.0-500.0	222.6	317.8	313.8
Նոր-Նորք	200.0-400.0	189.1	300.0	289.8
Ավան	180.0-350.0	180.7	273.8	269.5
Էրեբունի	160.0-400.0	176.5	262.7	253.5
Շենգավիթ	160.0-450.0	208.4	315.8	303.5
Դավթաշեն	200.0-450.0	225.7	316.7	312.7
Աջափնյակ	200.0-450.0	204.6	308.8	301.7
Մալաթիա-Սեբաստիա	200.0-400.0	205.3	297.9	293.7
Նուբարաշեն	90.0-180.0	79.1	164.0	140.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	90.0-970.0	228.0	336.3	327.1

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. հունիսին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.8%:

2005թ. հունիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 380 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. հունիսի համեմատ նվազել է 22.6%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ 0.8%-ով:

2005թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունիսին /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/	Միջին գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/		
			հունիս 2004թ.	հունիս 2005թ.	մայիս 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	40.0-150.0	63.2	100.8	98.3
	Ապարան	20.0-60.0	33.1	46.8	45.0
	Թալին	20.0-65.0	31.2	45.7	45.0
Արարատ	Արտաշատ	40.0-95.0	55.8	77.5	76.8
	Մասիս	40.0-100.0	59.9	91.5	89.5
	Վեդի	30.0-65.0	41.5	45.7	45.5
	Արարատ	30.0-70.0	38.6	58.2	58.2
Արմավիր	Վաղարշապատ	50.0-180.0	88.9	154.2	153.5
	Արմավիր	40.0-110.0	54.7	91.6	89.5
	Մեծամոր	20.0-65.0	32.6	49.1	49.0
Գեղարքունիք	Սևան	20.0-75.0	33.5	51.4	51.0
	Գավառ	20.0-65.0	33.6	41.8	41.8
	Մարտունի	20.0-70.0	34.1	51.0	50.0
	Վարդենիս	10.0-45.0	17.5	24.5	24.5
	Ճամբարակ	13.0-45.0	17.9	20.5	20.3
Լոռի	Վանաձոր	30.0-95.0	62.3	80.1	80.0
	Ստեփանավան	20.0-65.0	35.6	47.0	46.7
	Սպիտակ	30.0-80.0	35.9	51.4	50.6
	Ալավերդի	15.0-50.0	25.8	36.7	35.7
	Տաշիր	15.0-60.0	24.2	42.8	42.0
	Թումանյան	9.0-20.0	9.2	11.5	11.2
	Շամլուղ	5.0-18.5	5.2	6.1	6.1
	Ախթալա	15.0-35.5	19	22.8	22.8
Կոտայք	Արովյան	45.0-180.0	89.5	150.2	149.0
	Նոր Հաճն	50.0-120.0	59.6	101.8	100.4
	Բյուրեղավան	30.0-100.0	38.2	73.5	72.0
	Եղվարդ	35.0-100.0	44.8	89.4	88.4
	Հրազդան	30.0-100.0	37.5	60.8	60.3
	Ծաղկաձոր	40.0-150.0	80.5	116.8	114.5
	Չարենցավան	30.0-85.0	36.8	65.4	64.3
Շիրակ	Գյումրի	40.0-120.0	72.3	87.4	86.8
	Արթիկ	20.0-60.0	29.6	45.1	44.5
	Մարայիկ	18.0-50.0	27.6	35.2	35.2
Սյունիք	Գորիս	25.0-100.0	35.8	77.5	76.5
	Կապան	20.0-80.0	33.8	59.7	58.0
	Սիսիան	20.0-80.0	32.6	53.4	52.3
	Մեղրի	18.0-80.0	25.4	44.8	43.0
	Ագարակ	18.0-80.0	25.2	38.1	36.1
	Քաջարան	13.0-40.0	19.5	27.5	27.5
	Դաստակերտ	10.0-25.0	12.2	14.1	14.1
Վայոց Ձոր	Վայք	30.0-80.0	35.3	52.0	52.0
	Եղեգնաձոր	40.0-100.0	47.2	78.5	78.5
	Ջերմուկ	40.0-120.0	41.1	85.8	84.0
Տավուշ	Դիլիջան	30.0-80.0	38.9	67.5	64.5
	Իջևան	40.0-100.0	45.5	75.8	73.0
	Բերդ	25.0-70.0	30.3	54.8	54.5
	Նոյեմբերյան	15.0-45.0	27.4	27.8	27.8

2005թ. հունիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 1.5%:

2005թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 384 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 138, մյուս մարզերում միասին վերցրած՝ 246: 2004թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 19.3%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 46.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 35.6%-ով: 2005թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 6.7%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 76.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 12.8%-ով:

2005թ. հունիսին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունիսին /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/	Միջին գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/		
		հունիս 2004թ.	հունիս 2005թ.	մայիս 2005թ.
Կենտրոն	255.0-2000.0	470.8	684.6	669.1
Արաբկիր	200.0-1000.0	380.6	549.5	537.2
Քանաքեռ-Զեյթուն	150.0-600.0	224.1	327.7	320.9
Նորք-Մարաշ	200.0-1000.0	335.9	388.3	382.1
Ավան	190.0-800.0	187.2	283.6	276.2
Էրեբունի	150.0-500.0	183.0	268.5	260.4
Շենգավիթ	150.0-450.0	209.8	320.3	311.1
Դավթաշեն	200.0-900.0	229.0	335.0	324.9
Աջափնյակ	125.0-600.0	210.6	320.7	311.3
Մալաթիա-Սեբաստիա	140.0-900.0	208.5	311.5	304.3
Նուբարաշեն	80.0-200.0	80.1	168.7	148.8
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	80.0-2000.0	247.2	359.9	349.7

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. հունիսին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսեկան աճը կազմել է 2.9%:

2005թ. հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունիսին /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/	Միջին գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/		
			հունիս 2004թ.	հունիս 2005թ.	մայիս 2005թ.

Արագածոտն	Աշտարակ	60.0-180.0	84.5	105.6	103.8
	Ապարան	25.0-60.0	38.9	48.6	47.4
	Թալին	20.0-65.0	33.2	48.7	47.1
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	62.1	80.5	79.4
	Մասիս	50.0-100.0	63.2	93.7	91.8
	Վեդի	30.0-70.0	43.5	50.7	50.7
	Արարատ	30.0-80.0	39.9	61.2	60.6
Արմավիր	Վաղարշապատ	80.0-180.0	90.3	156.4	155.6
	Արմավիր	50.0-100.0	55.9	93.7	91.5
Գեղարքունիք	Սևան	20.0-65.0	36.4	53.5	53.0
	Գավառ	20.0-60.0	39.9	44.1	44.1
	Մարտունի	25.0-60.0	36.3	53.3	52.6
	Վարդենիս	15.0-50.0	21.3	27.8	27.7
	Ճամբարակ	15.0-50.0	20.2	24.3	24.3
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	69.8	83.6	83.5
	Ստեփանավան	35.0-80.0	37.3	58.7	58.6
	Սպիտակ	35.0-70.0	37.9	53.4	52.6
	Այվերդի	15.0-50.0	26.8	39.2	37.8
	Տաշիր	15.0-55.0	25.8	45.7	45.0
	Թումանյան	10.0-30.0	10.1	14.5	14.1
	Շամլուղ	5.0-20.0	6.8	9.1	8.9
	Ախթալա	20.0-40.0	20.5	25.0	24.3
Կոտայք	Արուսյան	70.0-180.0	93.1	152.3	151.4
	Նոր Հաճն	40.0-120.0	61.3	103.8	102.6
	Բյուրեղավան	35.0-90.0	39.7	75.5	74.4
	Եղվարդ	50.0-100.0	47.7	92.3	90.4
	Հրազդան	35.0-80.0	40.6	64.3	63.0
	Ծաղկաձոր	70.0-150.0	87.9	122.2	122.2
	Չարենցավան	35.0-90.0	38.4	67.6	67.5
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	91.6	95.7	95.7
	Արթիկ	20.0-70.0	30.1	47.2	46.6
	Սարայիկ	25.0-50.0	28.7	37.3	37.2
Սյունիք	Գորիս	40.0-90.0	37.5	79.5	79.1
	Կապան	30.0-80.0	34.9	61.8	60.4
	Սիսիան	20.0-70.0	33.8	55.8	54.4
	Մեղրի	25.0-60.0	28.2	46.8	45.2
	Ագարակ	15.0-50.0	27.9	40.3	38.2
	Դաստակերտ	10.0-35.0	13.6	16.8	16.7
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	37.0	54.0	54.0
	Եղեգնաձոր	40.0-100.0	49.4	81.4	80.6
	Ջերմուկ	25.0-90.0	43.4	63.7	61.6
Տավուշ	Դիլիջան	30.0-90.0	40.2	73.0	73.0
	Իջևան	40.0-90.0	46.6	76.8	75.5
	Բերդ	20.0-85.0	31.2	56.9	56.2
	Նոյեմբերյան	20.0-60.0	30.8	31.2	31.1

2005թ. հունիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսեկան աճը կազմել է 1.3%:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունիսին հանրապետությունում օտարվել են 1342.92 հա /այդ թվում՝ 17.61 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 1285.43 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 1300.30 հա հողերի

/այդ թվում՝ 15.34 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 1247.36 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 39.63 հա /այդ թվում՝ 0.20 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 37.27 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 2.99 հա /այդ թվում՝ 2.08 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ, որից 0.79 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 737.79 հա, որից 732.76 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2005թ. հունիսին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

ԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>						<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	20	3.79	2	0.48	0	0.00	83	7.60	24	3.47
Արագածոտն	27	157.02	6	0.72	0	0.00	36	10.87	39	3.84	0	0.00
Արարատ	72	107.79	9	0.97	7	0.72	62	22.45	60	6.15	1	0.002
Արմավիր	90	613.35	0	0.00	1	0.01	95	119.41	47	5.00	2	0.02
Գեղարքունիք	2	10.60	1	0.10	0	0.00	5	6.42	5	0.60	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	18	12.01	7	0.62	2	0.01
Կոտայք	78	66.48	0	0.00	0	0.00	127	55.50	131	12.79	0	0.00
Շիրակ	7	2.51	1	0.04	0	0.00	24	22.32	10	3.18	2	0.01
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	12	10.17	1	0.18	0	0.00
Վայոց Ձոր	14	27.42	0	0.00	3	0.01	1	0.51	2	0.15	0	0.00
Տավուշ	0	0.00	4	0.30	0	0.00	8	2.54	4	0.53	0	0.00
Ընդամենը	290	985.17	41	5.92	13	1.22	388	262.20	389	40.64	31	3.51

2005թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են 1159 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ հունիսին՝ 981/ այդ թվում 678-ը՝ գյուղատնտեսական նշանակության /469/, 474-ը՝ բնակավայրերի /507/, 7-ը՝ արդյունաբերական օբյեկտների /4/:

2005թ. հունիսին հողերի առուվաճառքներից 335 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2004թ հունիսին՝ 220/, այդ թվում 12-ը՝ /2.42 հա/ Երևանում /15/, իսկ 323-ը՝ /989.54 հա/ մյուս մարզերում /205/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 290 միավորը /985.17 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական /2004թ հունիսին՝ 44/, 31-ը՝ /4.07 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /165/, 11-ը՝ /1.17 հա/ հասարակական կառուցապատման /7/ և 3-ը /01.55 հա/ արդյունաբերական օբյեկտների /3/ հողեր:

2005թ. հունիսին հանրապետությունում արձանագրված 678 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 290-ն իրականացվել են աճուրդների և 13-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	27	157.02	50.0	2770.0	595.0	31	9.46	800.0	10000.0	4100.0
Ապարան								200.0	1700.0	630.0
Թալին						5	1.41	200.0	1680.0	520.0
Ծաղկահովիտ								170.0	2100.0	280.0
Արարատի մարզ										
Արտաշատ	23	45.35	175.0	3575.0	1265.0	18	6.61	740.0	12000.0	2370.0
Մասիս	20	18.85	90.0	7830.0	845.0	19	5.61	400.0	8800.0	2730.0
Վեդի	29	43.60	170.0	2130.0	1020.0	15	8.28	450.0	7200.0	1600.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						31	57.22	650.0	4650.0	1460.0
Բաղրամյան	57	567.39	35.0	1065.0	270.0	30	43.32	200.0	1500.0	830.0
Վաղարշապատ	33	45.96	45.0	2455.0	655.0	34	18.87	980.0	14000.0	2465.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								420.0	1100.0	650.0
Ճամբարակ	2	10.60	345.0	780.0	560.0			100.0	500.0	250.0
Մարտունի						1	0.11	100.0	4000.0	910.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						4	6.31	60.0	1180.0	340.0
Լոռու մարզ										
Այվերդի						5	2.04	360.0	5500.0	780.0
Գուգարք						2	0.95	500.0	6000.0	1860.0
Սպիտակ								500.0	3300.0	1040.0
Ստեփանավան						8	6.59	180.0	4000.0	550.0
Տաշիր								100.0	400.0	350.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	0.44	1170.0	1170.0	1170.0	60	20.05	600.0	20000.0	5850.0
Եղվարդ						41	23.67	380.0	10000.0	4020.0
Հրազդան	77	66.04	290.0	3030.0	560.0	26	11.78	250.0	6000.0	1350.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						5	5.37	550.0	2500.0	760.0
Ամասիա						1	2.88	80.0	525.0	200.0
Անի						8	3.58	240.0	800.0	390.0
Աշոցք						8	7.70	60.0	210.0	200.0
Արթիկ	7	2.51	400.0	935.0	715.0	2	2.78	140.0	800.0	300.0
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1.65	200.0	1600.0	600.0
Կապան						7	4.42	120.0	2000.0	450.0
Մեղրի								400.0	4240.0	900.0
Սիսիան						3	4.10	90.0	1500.0	370.0
Վայոց Ձորի մարզ										

Եղեգնաձոր	6	6.65	160.0	540.0	250.0	1	0.51	260.0	4000.0	2540.0
Վայք	8	20.77	275.0	1090.0	490.0			120.0	3400.0	1000.0
Տավուշի մարզ										
Բերդ						3	1.50	100.0	2000.0	680.0
Իջևան						4	0.42	530.0	4000.0	1620.0
Նոյեմբերյան						1	0.62	100.0	8340.0	790.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. հունիսին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են 327 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքի գործարքներ, որից 21-ը՝ աճուրդային վաճառքներ և 4-ը՝ դատարանի վճռով գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	7200.0	80.0	320.0	280.0	38	37546.0	250.0	8000.0	4100.0
Ապարան								250.0	1400.0	340.0
Թալին						1	820.0	100.0	800.0	150.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	5	6040.0	175.0	555.0	445.0	7	13660.0	300.0	6000.0	1550.0
Մապիս	1	1000.0	565.0	565.0	565.0	50	42680.0	300.0	20000.0	1840.0
Վեդի	3	2650.0	130.0	585.0	430.0	2	3860.0	250.0	2200.0	1080.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						15	23431.0	300.0	5000.0	1680.0
Բաղրամյան								180.0	600.0	230.0
Վաղարշապատ						32	26545.0	300.0	10000.0	2450.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								300.0	2000.0	660.0
Ճամբարակ	1	1000.0	250.0	250.0	250.0			100.0	300.0	160.0
Մարտունի						3	3460.0	200.0	600.0	310.0
Սևան								200.0	2000.0	260.0
Վարդենիս						2	2497.0	100.0	300.0	125.0
Լոռու մարզ										
Ալավերդի								150.0	600.0	210.0
Գուգարք						5	3750.0	150.0	5200.0	960.0
Սպիտակ								140.0	900.0	210.0
Ստեփանավան								100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						69	61278.0	300.0	10000.0	2960.0
Եղվարդ						53	59245.0	300.0	10000.0	3250.0
Հրազդան						9	7335.0	300.0	8000.0	2050.0
Շիրակի մարզ										

Ախուրյան						6	24496.0	250.0	3400.0	550.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի						1	1440.0	150.0	400.0	185.0
Աշոցք						1	5050.0	90.0	300.0	120.0
Արթիկ	1	400.0	595.0	595.0	595.0	1	84.0	150.0	900.0	250.0
Սյունիքի մարզ										
Գորիս						1	1770.0	150.0	1200.0	430.0
Կապան								150.0	1400.0	410.0
Մեղրի								150.0	900.0	230.0
Սիսիան								150.0	900.0	260.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	1501.0	150.0	2200.0	430.0
Վայք								170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան	4	3000.0	490.0	490.0	490.0	4	5319.0	150.0	2200.0	680.0
Նոյեմբերյան								100.0	1400.0	210.0

2005թ. հունիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 6 գործարքներ /որից 5-ը՝ գյուղատնտեսական նշանակության/ 1.18 հա մակերեսով, ընդ որում 5-ը՝ Արարատի /0.97 հա/ և 1-ը՝ Սյունիքի /0.21 հա/ մարզերում:

2005թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 994 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 25.9%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. հունիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 21.2%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ նվազել՝ 16.3%-ով:

2005թ. հունիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 36 բնակարանների, 29 անհատական բնակելի տների, 249 հասարակական, 15 արտադրական նշանակության օբյեկտների, 664 միավոր հողերի և 1 ավտոտնակի վարձակալության գործարքներ:

2005թ. հունիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 37 վարձակալության գործարքների քանակը 2004թ. հունիսի համեմատ նվազել է 26.0%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ աճել՝ 2.5 անգամ:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունիսին հանրապետությունում վարձակալվել են 2306.36 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 16.09 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 2061.88 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /որից 20.13 հա նախկին պահուստային/, 177.37 հա բնակավայրերի, 9.32 հա արդյունաբերական օբյեկտների, 39.42 հա հատուկ պահպանվող տարածքների, 0.14 հա տրանսպորտի օբյեկտների, 2.14 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 584.67 հա, որից 394.44 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ 8.15 հա Տավուշի մարզում, որից 3.31 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1048.48 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. հունիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	1	150.00	30	146.17
Արարատ	4	500.03	7	38.59
Արմավիր	0	0.00	8	29.21
Գեղարքունիք	10	76.45	22	317.99
Լոռի	0	0.00	74	246.01
Կոտայք	2	237.00	56	49.79
Շիրակ	2	85.00	69	153.36
Սյունիք	0	0.00	2	3.33
Վայոց Ձոր	0	0.00	21	25.65
Տավուշ	0	0.00	3	3.31
Ընդամենը	19	1048.48	292	1013.41

2005թ. հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 695 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.9%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. հունիսի համեմատ աճել է 10.0%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ նվազել 17.6%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 43.5%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /21.7%/, առանձնատների /16.4%/ և հողերի /6.5%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 412 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. հունիսի համեմատ աճել է 16.1%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ նվազել՝ 1.0%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունիսին հանրապետությունում գրավադրվել են 513.12 հա /այդ թվում 2.50 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 508.91 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 438.02 հա, որից 437.92 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2005թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 20 և 8 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3%: 2004թ. հունիսի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 54.8%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ աճել՝ 64.7%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 21.4%:

2005թ. հունիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1962 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. հունիսի համեմատ աճել է 43.4%-ով, իսկ 2005թ. մայիսի համեմատ՝ 19.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 19.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /54.3%/: